**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/44386-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-136-17.01.2022-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 191-Ա որոշումը:

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Ա. Խաչանյան

Հեռ. 515656

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-136-17.01.2022-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ օրենքի նախագիծ), որի համաձայն առաջարկվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանագրային զինծառայողների բնակարանային ապահովության շրջանակներում զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում դրամական փոխհատուցում հաշվարկել անկախ զինծառայողի կողմից բնակելի տարածության վարձակալության պայմանագիր կնքած լինելու հանգամանքից:

Նախագիծը հիմնավորվում է նրանով, որ օրենքի ներկա ձևակերպման արդյունքում առաջանում են որոշակի խնդիրներ, քանի որ զինծառայողները տարբեր պայմաններից ելնելով՝ երբեմն իրենց կամքից անկախ հանգամանքներում, իրենց վարձակալած բնակարանի համար պայմանագիր չեն կնքում: Վարձով բնակվում են այլ վայրերում, ծանոթ մարդ են գտնում, նրա հետ պայմանագիր կնքում, հարկերն իրենց կողմից վճարում և այդ փաստաթղթերը ներկայացնում համապատասխան հանձնաժողով՝ ստանալով վարձավճարի փոխհատուցում: Փաստացի ստացվում է, որ բնակելի տարածություն վարձակալելու համար փոխհատուցում ստացած զինծառայողներն իրավական ակտերով սահմանված կարգը պահպանում են, ներկայացնում են նաև Կադաստրի կոմիտեից տեղեկանք՝ սեփականություն չունենալու մասին, բացառությամբ այն դրույթի, որ ապրում են ոչ թե պայմանագրի մեջ նշված հասցեում, այլ բնակարանում, որի սեփականատերը չի կնքել պայմանագիր:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

Օրենքի 65-րդ հոդվածը կարգավորում է զինծառայողների բնակարանային ապահովմանը վերաբերող հարցերը: Նշված կարգավորման համաձայն՝ զինծա-ռայողներին ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն

հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալու դեպքում դրամական փոխհատուցում է նախատեսվում բնակելի տարածության վարձակալության դեպքում:

Հարկ է նշել, որ առկա կարգավորումն ինքնանպատակ չէ, քանի որ դրամական փոխհատուցումը տրամադրվում է բացառապես բնակելի տարա-ծության վարձակալության համար և չի կարող ուղղվել այլ կարիքների բավարարմանը: Որպեսզի տրվելիք դրամական հատուցումն անպայմանորեն ծառայի իրական նպատակին և հնարավոր լինի վերահսկողություն իրականացնել դրա նկատմամբ՝ օրենսդիրը նման հատուցումը կապել է բնակելի տարածության վարձակալության պայմանագրի առկայության հետ: Կարգավորման նպատակը ոչ թե պարզապես դրամական փոխհատուցման տրամադրումն է, այլ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների ապահովումը: Միաժամանակ՝ օրենքի նախագծի ընդունումը զինծառայողների բնակարանային ապահովության հարցում որևէ դրական առաջընթացի չի հանգեցնի, զինծառայողները ստացած ամսական դրամական փոխհատուցման հաշվին վարձակալելու են բնակարաններ առանց որևէ փաստաթղթի, ինչը նաև եկամուտների համընդհանուր հայտարարագրման տեսանկյունից խնդրահա-րույց է: Կառավարությունն անընդունելի է համարում առանց վարձակալության պայմանագրի դրամական հատուցում տրամադրելու գաղափարը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վարձակալության պայմանագիրը հանդիսանում է նաև զինծառայողի՝ բնակելի տարածքով ապահոված լինելու երաշխիք:

Խնդրահարույց է նաև այն մոտեցումը, որ վարձակալության պայմանագիր կնքելուց հրաժարվող սեփականատերերի նման վարքագծի դեմ պայքարելու համար փորձ է արվում օրինականացնել նրանց վարքագիծը: Հրաժարվելով կնքել վարձակալության պայմանագիր և միաժամանակ իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակարանը վարձակալությամբ տալով՝ այդ սեփականատերերը խախտում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի վերաբերելի դրույթները, դրանով էլ խուսափում հարկերի վճարումից՝ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետությունում առկա տնտեսական հարաբերությունների նորմալ ընթացքը:

Բացի այդ, պաշտպանության ոլորտի օրենսդրական՝ ներառյալ զինծառայողների վարձատրության համակարգի, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության երաշխիքների բարեփոխումների շրջանակներում պաշտպանության նախարարության կողմից 2022 թվականի ընթացքում

իրականացվելու է ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում, որոնց շրջանակներում համալիր լուծումներ են տրվելու նաև զինծառայողների բնակարանային ապահովության գործընթացին:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունների կատարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 191-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-136-17.01.2022-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-136-17.01.2022-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) երրորդ նախադասությունը շարադրել նոր՝ խմբագրությամբ.

«Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում պայմանագրային զինծառայողներին հաշվարկվում է ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:»:

2) չորրորդ նախադասությունում «ծառայողական բնակելի տարածությամբ ապահովելիս կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում վճարելիս» բառերը փոխարինել «սույն մասով սահմանված ամսական դրամական փոխհատուցումը հաշվարկելիս» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ վիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

Նշված հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զուտ օրենքի տեսանկյունից այս նորմը նախատեսվել է պայմանագրային զինծառայողներին սոցիալական երաշխիքներ ապահովելու նպատակով: Սակայն, օրենքի կիրառման արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ զինծառայողները, որոնք տարբեր պայմաններից ելնելով, երբեմն՝ իրենց կամքից անկախ, հաճախ իրենց վարձակալած բնակարանի համար պայմանագիր չեն կնքում: Վարձով բնակվում են այլ վայրում, որևէ ծանոթ մարդ են գտնում, նրա հետ պայմանագիր կնքում, հարկերն իրենց կողմից վճարում և այդ փաստաթղթերը ներկայացնում համապատասխան հանձնաժողով՝ ստանալով վարձավճարի փոխհատուցում: Փաստացի ստացվում է, որ բնակելի տարածություն վարձակալելու համար փոխհատուցում ստացած զինծառայողները իրավական ակտերով սահմանված կարգը պահպանում են, ներկայացնում են նաև Կադաստրի կոմիտեից տեղեկանք՝ սեփականություն չունենալու մասին, բացառությամբ այն դրույթի, որ ապրում են ոչ թե պայմանագրի մեջ նշված հասցեում, այլ այնտեղ որի տան տերը չի կնքել պայմանագիր: Նշված խնդրահարույց դեպքերի հանգամանքները՝ որպես հանցագործության հատկանիշ հիմք են հանդիսացել, և մի քանի տասնյակ պայմանագրային զինծառայողների նկատմամբ քրեական գործեր են հարուցվել: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության տրամադրած վիճակագրության համաձայն՝ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 30-ի թիվ 1138-Ն որոշմամբ հաստատված «Զինծառայողների և քաղաքացիական ծառայողների կողմից բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցման վճարման» կարգը խախտելով, բնակելի տարածությունների վարձակալության պայմանագրեր ներկայացնելու և իրականում տվյալ բնակարաններում չբնակվելու պայմաններում դրամական փոխհատուցումներ ստանալու վերաբերյալ զինծառայողների կողմից խաբեության եղանակով խոշոր չափերի խարդախություն կատարելու փաստերի առթիվ, մինչ օրս կայազորային քննչական բաժիններում քննվել են թվով 81 քրեական գործեր: Դրանցից 30-ի նախաքննությունն ավարտվել և գործերի ընթացքը լուծվել է անհատական մոտեցմամբ, իսկ 51 քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է:

Նման դեպքերով քրեական գործերի հարուցումը պարտավորեցնում է պայմանագրային զինծառայողներին, քրեական պատասխանատվությունից ազատվելու համար, միանվագ վճարել ամիսներ կամ տարիներ շարունակ պետությունից ստացած և իրենց կացության համար ծախսած գումարները, որն այս ծանր սոցիալական պայմաններում զինծառայողների համար անհաղթահարելի դժվարություն է:

Վերոնշված խնդիրների լուծման կապակցությամբ օրենսդրական փոփոխություն իրականացնելու անհրժեշտություն են տեսել՝ Պաշտպանության նախարարությունը և Զինվորական կենտրոնական դատախազությունը:

2. Կարգավորման նպատակը.

Նախագծով առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություններ իրականացնել,

որի համաձայն՝ ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում պայմանագրային զինծառայողներին հաշվարկվում է ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում հնարավորություն կընձեռնվի պայմանագրային զինծառայողներին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում առանց բնակելի տարածության վարձակալության և վարձավճարի չափի մասին համապատասխան պայմանագրեր և տեղեկանքներ ներկայացնելու օրենքով սահմանված կարգով ստանալու դրամական փոխհատուցում: